ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում*

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Տաթևիկ Մուրադյան

Դպրոց՝ Ծովինարի միջն. դպրոց

2022թ.

Բովանդակություն

Ներածություն ……3

Գծակարգերի օգտագործումը հայոց պատմության ուսուցման գործընթացում որպես բովանդակության ընկալման պատկերավոր միջոց ……...5

Փորձարարական դաս……..7

Եզրակացություն ……15

Օգտագործված գրականության ցանկ ……17

Հավելվածներ ……...18

Դասապլան ……..19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հայոց անկախ պետականության վերականգնումը շրջադարձային նշանակություն ունեցավ ազգային կրթական համակարգի ձևավորման և զարգացման առումով: Անհրաժեշտություն առաջացավ հանրակրթական դպրոցում ամրագրել հայագիտական առարկաների տեղն ու դերը, դրանց ուսումնական և դաստիարակչական ընդգրկվածության և բովանդակային հարցերը:

Այս համատեքստում առանձնակի նշանակություն ուներ Հայոց պատմության նոր ծրագրերի, դասագրքերի ստեղծումը, քանզի հայոց լեզվի և հայ գրականության հետ միասին Հայոց պատմությունը հանդիսանում է հայագիտական առարկաների առանցքային հենքը, ինչպես նաև հանրակրթության բովանդակության առաջնային բաղադրիչներից մեկը: Ուսուցման գործընթացի կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների ինքնուրույն ճանաչողական և ստեղծագործական ունակությունների զարգացումն է:

Անհերքելի է գիտելիքների, մտավոր կարողությունների դերը մարդկանց աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Սակայն սովորողները դժվարանում են կողմնորոշվել գործնականում, երբ անհրաժեշտ է գիտելիքները կիրառել կոնկրետ, ոչ ստանդարտ իրավիճակում:

Այդպիսի սովորողներին ակադեմիկոս Դ.Ի. Բլոխինցևը իրավացիորեն բնութագրում է <<լցոնած ձկներ>> արտահայտությամբ, որոնց պարունակությունը խանգարում է նրանց շարժունակությանը, և նրանք կորցնում են <<լողալու>> ունակությունը:

Խոսքն այստեղ վերաբերում է սովորողի գիտելիքների շարժունակության, մտքի ճկունության, ակտիվության, ինքնուրույնության բացակայությանը, գիտելիքները գործնականում կիրառելու անկարողությանը:

Գծակարգերի օգտագործումը բացառիկ դեր ունի սովորողի տարածական պատկերացումների և երևակայության ձևավորման ու զարգացման գործում:

Սույն հետազոտական աշխատանքի միջոցով կփորձենք ուսումնասիրել գծակարգերի օգտագործումը հայոց պատմության ուսուցման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները: Հետազոտա - կան աշխատանքի նպատակն է ուսումնասիրել՝ գծակարգերի օգտագործումը հայոց պատմության ուսուցման գործընթացում որպես բովանդակության ընկալման պատկերավոր միջոց:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ թե ինչպես կարելի է կիրառել գծակարգերի օգտագործումը հայոց պատմության ուսուցման գործընթացում,
- ուսումնասիրել՝ գծակարգերը որպես բովանդակության ընկալման պատկերավոր միջոց:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գծակարգերի օգտագործումը հայոց պատմության ուսուցման գործընթացում որպես բովանդակության ընկալման պատկերավոր միջոց

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը:

Բնականաբար նման առանձնահատուկ նշանակություն ունի սեփական պատմությունը նաև հայ ժողովրդի համար: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը:

Միաժամանակ, սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է նաև դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Հայաստանը հին ժամանակներից սկսած եղել է եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Շփվելով տարբեր մշակույթների հետ, կրելով նրանց որոշակի ազդեցությունը, հայ ժողովուրդը, սակայն, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ քաղաքակրթություն, որի շնորհիվ հասել է մարդկության պատմության նորագույն փուլին և շարունակում է իր պատմական ընթացքը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը:

Ահա թե ինչու առարկայի բովանդակության մեջ մեծ տեղ են զբաղեցնում Հայոց պատմության հերոսական էջերը, ազգային-ազատագրական պայքարի նախորդ և նորագույն փուլերը: Անտարակույս, Հայաստանի՝ Հայոց հայրենիքի ազատագրության համար պայքարը մեր ժողովրդի պատմության մշտական ուղեկիցն է, նրա գոյության ձևերից մեկը: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ 6

ապագա քաղաքացիներին ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայկական քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել ազատության ու բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին[1]:

Զինվելով պատմաքաղաքական փորձով և լավատեսությամբ՝ այսօրվա սովորողները շարունակելու են կերտել ու զարգացնել հայրենիքի հարատևման և ծաղկման ամուր հիմքերը:

Հայոց պատմության հանրակրթական առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է:

Այս առաջնահերթ նպատակից բխում են հետևյալ հիմնական խնդիրները.

- սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր - մշակութային արժեքներին,
- ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,
- ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում,
- օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, երևույթները և դասեր քաղել պատմությունից,
- ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմա - կան ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը,
- ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները:

[1] Տե՛ս, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. Հրատ., 2004, էջ 42-45:

Գծակարգերի պատկերների օգտագործումը սովորողների տարածական պատկերացումների և երևակայության, ստեղծագործական մտածողության, տեսական գիտելիքների դինամիկ աճի, գործնական և աշխատանքային ունակությունների զարգացման լավագույն մեթոդ է:

Ուսումնական գործընթացում մարդուն առավել անհրաժեշտ են գծակարգերի օգտագործման ունակություններ: Այդ իսկ պատճառով սովորողների գծակարգային պատրաստվածության հիմնական խնդիրը համարվում է գծակարգերի օգտագործման ուսուցումը:

Գծակարգերի օգտագործման մեթոդիկան մեզանում դեռևս մշակված չէ, չկա այդ կարևորագույն գործընթացի տեսական, գործնական համակարգ:

Գծակարգերի օգտագործման ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ներմուծել լրացուցիչ ակնառու տեսանյութ, առաջադրել սովորողների մտավոր գործունեությունը, ակտիվությունը զարգացնող նյութեր:

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, գծակարգեր, ինֆոգրաֆիկաներ: Դասերը հաջողված են լինում, երբ «Հայոց պատմության» առարկայի յուրաքանչյուր թեմա ներկայացվում է համապատասխան տեսանյութով, տեսաֆիլմով, գծակարգերով: Դա խթանում է երեխայի հետաքրքրությունը, նրա անմիջական մասնակցությունը, օգնում է արագ և արդյունավետ յուրացնել նյութը, զարգացնում է ստեղծագործե - լու, ինքնուրույն մտածելու կարողությունը: Իմ սեփական փորձից ելնելով՝ հաշվի առնելով երեխայի ընդհանուր զարգացվածությունը՝ աշակերտին հանձնարարում եմ կազմել գծակարգ կամ էլեկտրոնային տարբերակով ինքնուրույն գրաֆիկական պատկերներ, որոնք համապատասխանում են թեմային:

Հանձնարարում եմ փնտրել, գտնել համապատասխան նկարներ, դասը ներկայացնելով սեփական/հեղինակային/ գծակարգերի, մուլտֆիլմի կամ ֆիլմի օրինակներով՝ հստակորեն ուղղորդում եմ աշակերտին, միաժամանակ տալով նրան ընտրության լայն հնարավորություն:

Այս ամենը զարգացնում է երեխայի երևակայությունը, նրա համար առավելագույնս հետաքրքիր և հաճելի է դառնում դասի ամբողջ ընթացքը: Դասը հետաքրքրություն է առաջացնում նաև դասընկերների շրջանում, ձևավորում է առողջ մրցակցություն[2]:

[2] Տե՛ս, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար / Գ. Հովհաննիսյան., Ա. Զոհրաբյան., Ա. Արնաուդյան և ուրիշներ., Ե.: Տիգրան Մեծ 2004, էջ 52-55:

Փորձարարական դաս՝ դասարան X, **առարկա՝** հայոց պատմություն, **ուսուցչուհի՝** Տ.Մուրադյան, **դպրոց՝** Ծովինարի միջն. դպրոց, **դասի թեմա՝** հայկական լեռնաշխարհ, **մեթոդ՝** Վեննի դիագրամ:

Դասավանդման ընթացքում հաճախակի օգտագործում եմ քարտեզները և քարտեզների միջոցով աշակերտներին հանձնարարում եմ կազմել գծակարգեր, որոնց օգտագործման հիմնական նպատակներն են.

1. Բացահայտել աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունենում ուսումնասիրվող փաստերը, որով բացահայտվում է բնության կատարած խոշոր դերը հասարակական կյանքում:
2. Բացահայտել պատմական երևույթների տարածքային ընդգրկվածությունն ու տևողությունը, որով պայմաններ են ստեղծվում տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային կապերի և հակասությունների պարզաբանման համար:

Պատմական շատ իրադարձություններ հաճախ ավելի հեշտ յուրացվում են աշխարհագրական կամ տարածքային պայմանների առնչությամբ: Տեղի, կլիմայի, գետերի, ծովերի, բնապաշարների մասին տեղեկությունները նպաստում են փաստերն ու իրադարձությունները հիշելուն:

Կոնկրետ տարածքին և աշխարհագրական միջավայրին փաստերի համադրումը կոչվում է լոկալացում: Այս մեթոդի կիրառումը ենթադրում է պատմական քարտեզների օգտագործում: Աշխարհագրական քարտեզներից դրանք տարբերվում են նրանով, որ կենտրոնացված են սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային տեղեկությունների վրա:

Պատմական քարտեզները լինում են՝

- թեմատիկ, ակնարկային,
- պլան-քարտեզներ, և
- սխեմատիկ քարտեզներ:

Տարածությունների մասին պատկերացումներ ստեղծելու համար արդյունավետ է կազմակերպել՝

1. աշխատանք ուրվագծային քարտեզի հետ,

2. աշխատանք ինքնաստեղծ ուրվագծային քարտեզների հետ, որը կարող է պատկերվել գրատախտակի, թղթի վրա:

Պատկերները գծվում են նյութի շարադրանքին զուգահեռ: Ընթացքում կարելի է օգտագործել նաև ապլիկացիաները, պայմանական նշանները: Պետք է հիշել, որ քարտեզներն ապահովում են պատմական երևույթների տեղադրումը տարածության մեջ, այլև հանդիսանում են պատմական իրադարձությունների մասին գիտելիք - ների աղբյուր, ուսումնասիրած նյութի ընդհանրացման միջոց, աշակերտների գիտելիքների ամրապնդման և ստուգման ձև:

Դրա համար էլ քարտեզը անհրաժեշտ է յուրաքանչյուր դասին, բայց պարտա - դիր է դասի թեմային համապատասխան: Մեկ դասի ընթացքում կարելի է կիրառել մի քանի քարտեզներ, բայց ոչ ավելի քան երեքը, քանի, որ այդ դեպքում սովորող - ները կշփոթեն աշխարհագրական տարածքները, պատմական գործընթացները, երևույթներն ու իրադարձությունները:

Եթե դպրոցում չկա ուսուցանվող նյութին համապատասխան քարտեզ, ապա չի կարելի այն փոխարինել պատմական այլ ժամանակաշրջանի քարտեզով, քանի որ սովորողների մոտ կձևավորվի սխալ պատկերացումներ տվյալ տարածքների վերաբերյալ:

Նման դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել ֆիզիկական քարտեզ, որի վրա սահմաններ չկան, օգտվել պատմական ատլասից կամ դասագրքի քարտեզից:

Պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը քարտեզների միջոցով պահանջում է մշակել հատուկ նպատակաուղղված հարցեր.

1. Կոնկրետ փաստ վավերացնող /ցույց տվեք Հին Եգիպտոսի տարածքը/,

2. Մեկնաբանություն պահանջող /ցույց տվեք այն գետը, որի ջուրը Հապի աստվածն է լցնում/:

3. Պատմական քարտեզը այլ աղբյուրների օգտագործմամբ վերլուծելու նպատակով /համեմատել նոր և նորագույն շրջանների աշխարհի քաղաքական քարտեզները, մեկնաբանեք տարածքային և քաղաքական փոփոխությունները/:

4. Հիմնախնդիրների լուծում պահանջող[3]:

[3] Տե՛ս, Կ. Լալայան., Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ, Երևան 2009, էջ 29-30:

Աշակերտները քարտեզների վերաբերյալ պետք է գիտենան, որ

1. Քարտեզի անվանումը համապատասխանում է թեմայի հիմնական բովանդակությանը,

2. Թեմատիկ պատմական քարտեզները գծագրվում են աշխարհագրական հիմքի վրա,

3. Պատմական քարտեզը ներկայացնում է անցյալը,

4. Քարտեզն ունի իր լեգենդը, որը մեկնաբանում է պայմանական նշանները:

Աշակերտները քարտեզների վերաբերյալ պետք է կարողանան.

1. Նշել և անվանել աշխարհագրական տարածքը,

2. Ընկալել մասշտաբը,

3. Համեմատել վայրերի հեռավորությունը և տարածքի չափերը հայտնի փաստերի հետ /մեծ է կամ փոքր է մեր հանրապետությունից, հեռու կամ մոտ մեր գյուղից/ քաղաքից մինչև մայրաքաղաք/,

4. Օգտվել լեգենդով բնորոշած պայմանական նշաններից,

5. Բանավոր մեկնաբանել քարտեզի բովանդակությունը:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխա - նեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծակարգեր: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են:

Ստորև ներկայացված են գծակարգերի մի քանի օրինակներ:

Գիտելիքի կազմակերպիչներ



Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը։

Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ։ Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ։

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում։ Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները։

Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը։

Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին։ Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը։

Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման։ Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման։

Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման։

Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային։

Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին։

Այսպիսով, կիրառվող մեթոդները թուլ են տալիս բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը և այն հնարավորինս համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչների պահանջներին[4]։

[4] ₄Տե'ս, Հ. Ղևոնդյան., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան 2001, էջ 12-14։

Եզրակացություն

Այսպիսով, կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի ստանձնած դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և, ի վերջո, պայմանավորված են նրանով, որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, և, ուրեմն, փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները:

Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարևորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքն ինքնին: Ինչ: Ինչու: Ինչպես: Յուրաքանչյուր ուսուցիչ մինչև դասարան մտնելն ինքն իրեն հարց է տալիս, թե որն է դասի նպատակը և ինչ պետք է սովորեցնի նա աշակերտին:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնա -կան գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումն առանց աշակերտի անմիջական մասնակցության անհնար է: Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ: Դրանք նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ (եզակի) իրավիճակին:

Զարգացնող ուսուցման գաղափարից ելնելով՝ կրթության բովանդակության բնույթին համապատասխան, կարելի է առանձնացնել գծակարգերի օգտագործման մեթոդը:

Այս մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը ուսուցումը կազմակերպում է այնպես, որպեսզի ապահովի աշակերտների ակտիվ մասնակցությունը: Այս մեթոդի հիմքում ընկած են աշակերտների կողմից սովորելու համար նախատեսված իրի, առարկայի, երևույթի հետ անմիջական շփումը, բնական կամ պատկերների

մոդելների, մակետների հետ ծանոթացումը: Ուսուցչի խնդիրը շարունակում է մնալ աշակերտներին ինքնուրույնաբար կարդացածը հասկանալ սովորեցնելը, գլխավորը երկրորդականից տարբերելը, ինքնուրույն եզրահանգումներ կատարելը:

Այսպիսով, պատմաբան-մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական միտք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Ուսուցիչների համար, Կրթության ինստ. Հրատ., 2004

2. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար / Գ. Հովհաննիսյան., Ա. Զոհրաբյան., Ա. Արնաուդյան և ուրիշներ., Ե.: Տիգրան Մեծ 2004

3. Կ. Լալայան., Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ, Երևան 2009

4. Հ. Ղևոնդյան., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան 2001

Հավելվածներ

Հավելված 1. Հայկական լեռնաշխարհ: Բնաշխարհագրական քարտեզ

Հավելված 2. Հայկական լեռնաշխարհը և Առաջավոր Ասիան: Ք.Ա. III-II հազարամյակներում Հայկական առաջին պետական կազմավորումները:



ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Տ. Մուրադյան

Առարկա՝ Հայոց պատմություն		Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	10-րդ
Թեմա՝	Քաղաքակրթության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում						
Օգտագործվող նյութեր՝	Գիրք, կավիճ, գրատախտակ						
Դասի նպատակը՝	1.Ներկայացնել հայկական քաղաքակրթուրյան առաջացման ակունքները 2.Հայկական վաղ պետական կազմավորումները						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Իմանա Հայկական քաղաքակրթության առաջացման ակունքները: Հայաստանի մշակույթի տարածումը:1-ին պետական կազմավորումը Արատտա՝ ,,Արմենիա,, անվան հիշատակմամբ Ուրմիա, Արման, Կուտիական աշխարհակալություն						

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)

	Նախապատրաստվել է դասին: Հնչեցնել իրենց համար կարևոր կամ անհասկանալի հարցեր	Կատարել աշակերտների հաշվում: Պատասխանել աշակերտների կողմից հնչեցված հարցերին:Աշակերտներին /թերացողներին/ տալ համապատասխան հարցեր:Հարցերի միջոցով ամփոփել ամբողջ դասը:	1. Երբ է տեղի ունեցել անցումը նախնադարից վաղ քաղաքակրթություն և վաղ պետակ. կազմավ. 2. Երբ է տեղի ունեցել մշակույթի տարածումը: 3. Ներկայացրեք Արրատա երկիրը: 4.Որ աղբյուրներից ենք տեղեկանում Արմենիա անվան հնագույն հիշատակման մասին: 5. Որն էր Կուտիական աշխարհը:	Մտագրոհ հաղորդումնեբի մեթոդ
Տնային աշխատանք 3ր	Տնային առաջադրանքի հանձնարարում Նոր դասի հաղորդում			

Փոխտնօրեն՝ _____